

ՄԱՏԵՆԱԽՕՍԿԱՆ

Փառւստ. ողբերգութիւն Գէօթէի. թարգմ. գերմաներէնից Գէորգ Բարխուդարեանց. հողինակի սլատկերով եւ կարետը ծանօթութիւններով: Հրատարակութիւն Արշակ Բաքսանի. Թիֆլիզ. արագատիպ Մ. Մարտ. 1902. էջ III+219. գինը 2 ռ.

Անորոգողը աշխարհաբար գրականութիւնը հետզհետէ հարստանում է համաշխարհային հեղինակութիւն ծանաչուած հանճարների երկերի թարգմանութիւններով. իդալիստ Շիլլէրի, մարդկային հոգւ խորքերը թափանցող Եէքսպ'րի Եղլուս-գործոցներն ալդէն թարգմանուած էին և ահա փիլիսոփայ-բանաստեղծ Գէօթէի ամենանշանաւոր աշխատութիւնն էս աւելանում է ալդ շարքին՝ շնորհիւ մեր ձերունի բանաստեղծ Գէորգ Բարխուդարեանի:

Ֆաուստի նիւթն իսկապէս Գէօթէի երկակալութեան ծնունդ չէ, ալ գերման ժողովրդի մի առաջաւելական աւանդութիւն: Ըստ ալդ աւանդութեան՝ նշանաւոր գիտնական և կախարդ զօկտօր Ֆաուստը բաղձալով երկնքի և երկրի բոլոր զաղտնիքներն իմանալ և գիտութիւնների միջոցով իւր նպատակին չհասնելով՝ վճռում է սատանայի օգնութեանը դիմել: Սատանայի փոխանակ Ֆաուստին ներկայանում է առաջինի ստորադրեալ ոգիներից Մէկը, Մէֆիստօֆէլէսը, և նրա հետ դաշն է կապում 24 տարուայ պայմանագրով: Դաշնագրութեան դրութեամբ՝ Ֆաուստը վաճառում է իւր հոգին սատանային այն պայմանով, որ Մէֆիստօֆէլէսը 21 տարուայ ընթացքում պարտաւոր չի նրա բոլոր ցանկութիւնները կատարել: Դաշնագրութիւնը կնքուելուց քսոյ՝ Ֆաուստն ուրախ և ցոյլ կեանք է վարում, ճանապարհորդում է Մէֆիստօֆէ-

լէսի հետ զանազան երկիրներ և բաղմատեսակ կախարդական գործեր անում: Պալմանաթամի 23-րդ տարին Ֆաուստը հարկադրում է իւր ընկերակցին՝ գտնել գեղեցիկ Հեղինէին, ամուսնանում է նրա հետ և որդի ունենում: 24-րդ տարին Ֆաուստը զղջում է, դաժգատում է իւր վիճակի մասին և վերջապէս այդ տարուալ վերջին գիշերը Մէֆիստոֆէլէսը նրա հոգին դժոխքն է տանում:

Ահա այս է գերմանական ժողովրդական աւանդութեան համառօտ բովանդակութիւնը, որ բաղմաթիւ հրատարակութիւնների նիւթ է դարձել. գերմանական շատ աննշան և նշանաւոր գրողներ մշակել են այդ նիւթը՝ վիպական և ողբերգական բանաստեղծութեամբ, բայց Ֆաուստի հանճարեղ մարմնացումը և համաշխարհային ընթերցանութեան նիւթ դարձնելը վերապահուած էր միայն Գէթէին: Արդէն 1770 թ. երբ դեռ երիտասարդ Գէթէն Սառասբուրգի համալսարանի ուսանող էր, ծրագրում է Ֆաուստը՝ նիւթ դարձնել մի ընդարձակ ողբերգական բանաստեղծութեան. ալեուհետեւ նա մինչև մահ մշակում և կատարելագործում է Ֆաուստը: 1790 թ. Գէթէն տպագրում է Ֆաուստի մի հատուածը—*«Faust, ein Fragment»*—, իսկ 1808 թ. լոյս է տեսնում Ֆաուստի I մասն ամբողջ, Երկրորդ մասը Գէթէն վերջացնում է 1831 թ., իւր մահից մի տարի առաջ: Այսպիսով բանաստեղծը վաթսու և տարի շարունակ մտածում, փոփոխում, ստեղծագործում է այդ նշանաւոր երկը, որ իւր զուգակիցը չունի համաշխարհային գրականութեան մէջ: Գէթէն համարեւ թէ իւր ամբողջ կեանքի ընթացքում մտածելով Ֆաուստի մասին, իւր սեպնական հոգին ու շունչն է տուել նրան. արտաքուստ աւանդական Ֆաուստն է նկարագրում, սակայն ներքուստ բանաստեղծի հոգեկան աշխարհն է արտափայլում: Եւ լիրաւի, Գէթէի կենսագրութիւնն ուսումնասիրողը պարզ կտեսնէ՝ թէ որչափ նմանութիւն կալ բանաստեղծի բեղմնաւոր կեանքի և Ֆաուստի արկածների մէջ: Գէթէն ինքը մեծ ձգտումն ունէր ճանաչելու բնութեան գաղտնիքները և ողորութեամբ ուսումնասիրում էր գիտութեան զանազան ճիւղերը: Նա նորն իսկ հմայութեամբ և ալքիմիայով էր զբաղւում: Առէր բախի պահդոկի նկարագիրը լիշեցնում է Գէթէի ուսանողական քէֆերը լալզցիգում: Իսկ Սառասբուրգի ուսանող Գէթէն ախրահարուած էր Ֆրիդէրիկին, որին շատ գծերով նման է

Գրէտխէնը, Մէֆիստոֆէլէսը Ֆաուստին պալատական-
կեանքի շրջանն է մտցնում. Գէօթէն Սաքսէն-Վայմարի մեծ-
ղքսի պալատումն էր լինում երկար ժամանակ և այլն:

Դառնանք հայերէն թարգմանութեան:

Բարխուդարեանն երիտասարդական հասակից սկսած,
քսան և մէկ տարուաւ ընթացքով—Վիլհէլմ Տէլ 1873 թ. և
Մարիա Ստիւարտ 1894 թ.—տուեց մեզ Շիլլէրի ամենանշա-
նաւոր ողբերգութիւնները և ալժամ, երբ նրա վաստակալից
կեանքը դէպի արևմուտ է թեքում, հալ զրականութեան
նուիրում է «Ֆաուստիո I մասը, Թէև Ֆաուստի I մասն-
արդէն հայերէն թարգմանուած է երկու անգամ—Մ. Նուպա-
րեանի, Զմիւռնիա, 1831 թ. և Լ. Տիգրանեանի, Տփլիս,
1900 թ.—սակալն դոցա համեմատական արժէքը պակաս է,
որովհետև երկուսն էլ թարգմանուած են արձակ:

Թարգմանական զրականութեան մէջ հարկաւ ամենա-
դժուար մասը տաղաչափական գրութեան թարգմանութիւնն է.
արձակ գրութեանը կարող է թարգմանել ամեն ոք, եթէ տի-
րապետում է բնագրի և թարգմանութեան լեզուները և ըմ-
բռնում է նիւթը. սակալն տաղաչափական գրութեանը կարող
է թարգմանել միայն բանաստեղծը. Ով բանաստեղծական-ե-
րակալական թախք չունի, չի կարող բանաստեղծութիւն
թարգմանել. այդպիսի թարգմանութիւնն արհեստական կլինի
և տաժանելի ալիստութեան արդիւնք: Իսկ «Ֆաուստ» թարգ-
մանելու համար կարևոր է աւելի մեծ հմտութիւն, որովհետև
այդտեղ բանաստեղծութեան հետ միացած են փիլիսոփայական
մտքեր, նուրբ հեղնութիւն, երգիծաբանութիւն, խորիմաստ
դատողութիւն, առասպելաբանութիւն, դիցաբանութիւն և
այլն:

Թէ արդեօք Բարխուդարեանի հմուտ թարգմանական
գրիչը ճշգրտօք կարողացել է ալդ դժուարին գոյժը գլուխ բե-
րել, կտեսնենք ստորև: Ֆաուստը բաղկացած է համարեաւ ի-
րարից անկախ հատուածներից և ալդ պատճառով էլ մենք
մեր խօսքն առաջ կտանենք ալդ հատուածների կարգով:

Ա. ՆԻՒԻՒՐՈՒՄՆ. այս հատուածի մէջ բանաստեղծը լի-
շում է իւր երիտասարդական հասակի շրջանը, անցած ուրախ
օրերի ցնորքները և զաւղատում, որ ալն հասարակութիւնը,
ում համար որ զրում է ալժամ, չի հասկանում իրեն: Հէնց ա-
ռաջին տողում «Schwankende Gestalten» թարգմանուած է:

սպասկիրներ ազատ. առաջին բառի նշանակութիւնն է «ե-
րկրուն», «ստատանուող». «անկալուն», «սմբովում» էք իմ շուրջ
օդում մշուշ ոտտ. բնագիւրն ասում է «...զոլորչիների և
մէզի միջից». Վերք աննդութիւն անցած դարերիւ.
բնագ. հին, կիսամոռացուած աննդութեան պէտ:

«Այլ իշտս նորոգում, սրտիս լարերի
Հնչիւնը կրկնում է հին դանդաղաներ,
Եւ անուանում է սիրելիներին,
Որոնք հեռացան, թողին ընկերին»:

Բնագ. «Այլ իշտս նորոգում է, կեանքի լարերն ինքս լին
լոր ընթացքի դանդաղը կրկնում է և անուանում պէն բարի
մարդկանց, որ բաղդից խարուած անկալացան»:

«Եւ ինչ քաշում է բուռն ցանկութիւն
Գէպ կախարդական խաղաղ աշխարհը»:

Բնագ. «Եւ մի վաղուց լեռ սովորած կարօտ դրաւում է ինձ
դէպի մէջ խաղաղ, լուրջ ողիւն և ինչ աշխարհը. «Եւ հալա-
ծում է սրտիս խաւարը». Բնագ. «կարծր (խստասիրտ) սիր-
տըս ալիմ զգում է միշտ և գորովալի»:

Նուիրումը բաղկացած է վերաբեր 32 տողից: Գուցէ ըն-
թերցողն ասէ. թէ ինչ մի մեծ տարբերութիւն կալ. «սոցում
մշուշոտ» և «զոլորչիների ու մէզի միջից» դարձուածքների և
«կախարդական» և «ողիւների» աշխարհ բառերի մէջ. անա թէ
ինչ. Գէօթէն լիւնլով անցեալի պատկերները, հէնց ալդ ան-
ցեալն է անուանում զոլորչի ու մ.գ. իսկ Բարխուդարեանի
թարգմանութիւնից զուրս է գալիս, որ ներկայումս (Գէօթէի
գրելու միջոցին) է մշուշոտ օդ. Բանաստեղծը մտաբերելով իւր
մեռած բարեկամներին, ասում է, որ իրեն դրաւում է ողիւն-
րի աշխարհը Geisterreich, որ կամ հողիների աշխարհ պէտք է
հասկանալ կամ «հանդերձեալ աշխարհ», «միւս կեանք». իսկ
թարգմանիչն ասում է «կախարդական» աշխարհ, որ բոլորո-
վին տարբեր գաղափար է:

Բ. ՆԱԽՆԵՐԳԱՆԲ ԹԱՏՐՈՆՈՒՄ. Բանաստեղծն առաջ է
բերում երեք գործող անձինք. թատրոնի կառավարիչ, բանա-
ստեղծ և կատակերգու և զրանցից ամեն մէկն իւր հալեացքն
է լալտնում. թէ ինչ պէտք է պահանջուի իւրաքանչիւր բե-
մական գրուածքից:—

«Մանաւանդ որ ամբողջն է մեզ ապրուստ տալիս»:
Գէօթէն ալապէս պարզ շահասիրական խօսքեր չէ դնում կա-

աւարչի բերանը, ալ սքողուած և ընդհանուր կերպով է ա-
սում Վանաւանդ որ նա ապրում է և ուրիշներին ապրեց-
նում:

«Խռնոււ լոյ, պաշարում է մեր խանութը»:

Այստեղ խանութի մասին խօսք չի կարող լինել. դերմ.
«Bude» նշանակում է նաև շարժական, ժամանակաւոր բեմ,
թատրոն, որ տօնաւաճառների և ժողովրդական տօների ժա-
մանակ բաց են անում հրապարակներում:

«Ծածկի՛ր ինձնից ալ հոսանքը վաւրենի,
Որ մեղ իւր հետ քշում, տանում է բռնի»:

Բնագ. «Թագրու (մի լիւեցնի) ալդ ալնծուի խռնուած-
քը (ամբոխը), որ ալամալ մեղ դէպի լորձանքն է քաշում»:

«Ուր ծաղկում է ուրախութիւնն անարատ»:

Բնագ. «Ուր միայն բանաստեղծի համար և ալն»:

«Ուր սուրբ սէրը պարզում է մեր սրտին

Քաղցր վայելք, երջանկութիւն անընդհատ»:

Բնագ. «Որտեղ սէրն ու բարեկամութիւնը աստուա-
ծալին ձեռքով ստեղծում և խնամում են մեր սրտի օրհնու-
թիւնը»:

«Շատ բան տալով, շատ շատերին կը շահէ ք»:

Բնագ. «Ով շատ է բերում, շատերին քիչ-քիչ կբերի»:

Այս տողի հալերէն թարգմանութիւնը ռուսերէն թարգ.
հետևողութեամբ է արած.

«Кто много предложитъ, тотъ многимъ угождаетъ»:

«Կանալք իրանց դարդերն են ի ցոլց հանում,

Որ հրապուրեն իրանց վերալ նալողին,

Եւ բեմի վրալ ուշադրութիւն չեն դարձնում»:

Բնագ. «Կանալք իրենցով ու իրանց դարդերով են հրա-
պուրում և առանց վարձի մեղ հետ միասին խաղակցում»:

Գ. ՆԱԽԵՐԳԱՆՔ ԵՐԿՆՔՈՒՄ. Աստուած Ֆաուստին փոր-
ձելու համար մատնում է Մէֆիստոֆէլէսի ձեռքը և առաջուց
գուշակում, որ պատանան պէտք է լաղթուի»:

«Բալց մեղ, Տէր, քո արեգակը

Փայտում է, փակք նրա ստեղծողին»:

Բնագ. «Սակայն քո պատգամաբերները, Տէր, պաշ-
տում են քո ստեղծած օրուալ մեղմ ընթացքը»:

«Անշուշտ, ծիծաղել թէ կամենալիւ,

Կը ծիծաղացնէր քեզ էլ իմ ճառը»:

Բնագ. «Իմ բարձր ոճը (պաթոս) հարկաւ քեզ կծիծաղացնէր, եթէ լեռ սովորած չլինէիր ծիծաղելը»:

«Էական խելացնոր»։ Բնագ. զարմանալի կամ անարօրինակ մարդ»:

«Մարդիկ ամեն խեղճ են ամենեղ, թշուառ»:

Բնագ. «Մարդիկ իրանց թշուառ օրերում իմ կարեկցութիւնն են շարժում»:

Դ. ՈՂԲԵՒԴՈՒԹԵԱՆ I ՄԱՍԸ.

Հաւերէն թարգ.

Ռուսերէն թարգ.

«Լացով, երկիւղով

«Тѣло съ слезами

Դրինք դերեղման».

Въ гробѣ положили мѣло».

Բնագ. «Մենք, նրա հաւատարիմները, նրան արտեղ-դրինք»:

«Ով սրտածմլիկ

Փորձելով չարիք,

Փորձին դիմացաւ»:

Բնագ. «Որ վշտալի, փրկարար, հրահանգիչ փորձանքին դիմացաւ»:

«Տէր, մոտիթարիր

Մեր հոգին լքեալ»:

Բնագ. «Ա՛խ, մենք ողորում ենք, Տէր, քո բաղդը»:

«... Նորա պատուէրը

Միշտ քարոզողին,

Միշտ մօտ է Տէրը,

Մօտ նորա սէրը»:

Բնագ. «... Եղբայրաբար կերակրողներին, քարոզող-ուղևորներին, բերկրութիւն խոստացողներին (կամ աւետող-ներին)»։ Տէրը մօտ է ձեզ»:

«Երկիւղածութեամբ լի է իմ աճը,

Ջարթեց սրտիս մէջ բարի նախաճը»:

Բնագ. «Խորհրդաւոր, սրբազան արշալոյսի հետ՝ մեր մէջ զարթում է լաւագոյն հոգին»:

«Ո՛հ, ընդունիր ինձ, հինաւուրց արժեք,

Դժւ պապերի դահ նահապետական»:

Բնագ. «Պու որ նախնիքներին գրկաբաց ընդունել ես՝ նրանց վշտի և ուրախութեան միջոցին, ճիշտ, ընդունիր և ինձ»:

«Ուրջան լիրբ եմ, նոյնքան ստոր եմ ու դաճած»:

Բնագ. «Մեծ լիմարը, ակն, որջան փոքրացած»:

«Մեզ ուրիշներին «էտք չէ առնել դատ»:

Բնագ. «Այո, եթէ մի փոքր աւելի խորը (շատ) չգիտե-
նալինք»:

« ... Եւ հոգուս առաջ

Բացում են բնութեան հրաշալիքները»:

Բնագ. «Յոյց ես տալիս իմ անձն ինձ և իմ սրտի գաղ-
տնիքները, հրաշքներ են լայնագործւում»:

«Ինձ մօտ իջնում են ժալութիւնը ծածկող

Խոնաւ թփերից անցած դարերի

Ալեւոր ստուերներ և մեղմացնում են...»:

Բնագ. «Նախնեաց ալեւոր պատկերները դէպի վեր են
քարծրանում քարաժալութիւնից և խոնաւ թփերից»:

«Աշխարհը թողած, ալս փոստում մթին

Որոնում ես դու բաւականութիւն,

Բալց շուտով կըզգաս սաստիկ ձանձրութիւն,

Եւ շատ չի անցնի, որ էլի նորից

Հալ ու մաշ կըլինիս դու նոր ցնորքներից»:

Բնագ. «Կարճ և ազդու. ես թող եմ տալիս նրան տեղն
եկած ժամանակը մի փոքր ստելու զուարճութիւնը. բալց նա
երկար չի կարող տանել ալդ: Դու արդէն կրկին լուզուած
ես, և եթէ երկար տեւի, կծիւրուիս կատաղութիւնից կամ եր-
կիւղից ու սարսափից»:

«Պ ա ու լ ս տ ի» թարգմանութեան առաջին հատուածնե-
րը համեմատաբար աւելի են շեղում բնագրից. հետզհետէ
շեղումները սակաւանում և վերանում են: Այն մասերը, ուր
շեղումներ չկան և բնագրից հաւատարմութեամբ է հալացրած,
աւելի լաւ տպւորութիւն են թողնում. առաջ բերենք ճշ-
տութեամբ թարգմանուած հատուածներից մի քանի օրինակ.

Գ ր է տ խ է ն

«Կորաւ իմ հանգիստ,

Միրտս ծանր է խիստ.

Անձկութիւնն ու վիշտ

Տանջում են ինձ միշտ:

Ուր որ նա չկայ,

Անդ միայն մահ կայ.

Ամբողջ աշխարհը

Մութն է ու դառը:

Խեղճուկ գլուխս էլ

Խեղադարուել է,

Միտքս շփոթուել

Ու խանդարուել է:

Նորան եմ նայում

Միշտ պատուհանից,

Նորա համար եմ

Դուրս գնում տանից:

Նորա քայլուածքը,

Ազնիւ շարժուածքը,

Ժպիտը անոյլ,

Աչքի փալլն ու ուժ:

Նորա խօսքերի
Քողիչ հրապուրը,
Ա՛խ, շրթունքների
Քաղցր համբուրը,
Ա՛խ, կարողանամ,
Նորան ամեն ժամ

Պինդ պահել գրկիս,
Կշտանալ հոգիս,
Համբուրներ անվերջ
Դրոշմեմ շրթունքին,
Համբուրների մէջ
Փշեմ իմ հոգին:

(էջ 150—151)

Դ ր է տ խ է ն

«Նայիր ողորմած,
Դ՛ս, վշտով լցուած,
Իմ անտանկի տարաբաղդութեան,
Սիրտդ վիրաւոր,
Յաւով բիւրաւոր
Նալում ես որդուդ սոսկալի մահուան...»

(էջ 161)

Ֆ ա ու ս տ

Այս թնչ է՝ Ո՛հ, ինչ երկնային պատկեր
Եմ այս դիւթական հալելում տեսնում:
Տնւր ինձ քո արագ թևերը, ո՛վ սէր,
Եւ տար ինձ ալետեղ, ուր նա է ապրում:
Ա՛խ, երբ շարժում եմ իմ կանգնած տեղից
Եւ համարձակում մօտենալ նորան,
Մշուշով պատած է երևում ինձ,—
Կատարեալ տիպար կնոջ գեղեցկութեան:
Ո՛հ, միթէ ալդքան չքնաղ է կինը:
Կարճ է, անխ, այս փափուկ մարմինը
Բոլոր երկնայինն իւր մէջ ամփոփել:
Հնար է երկրի վրալ նրմանը գտնել»:

(էջ 103)

Մ է ֆ ի ս տ օ ֆ է լ է ս

«Երբ Աստուած վեց օր քրտինք է թափում,
Եւ վերջն ինքն իրան «բրանօ» է ասում,
Ի հարկէ պէտք է լաւ բան գոյանալ:
Նայիր, մինչև որ աչքդ կշտանալ:
Շուտով կունենաս դու մէկ աղպիսին:
Երջանիկ է նա, ով կարժանանալ,
Նրան տուն տանել, իրբն ամուսին»:

(էջ 103)

8

Վ Ե Ռ Լ Կ

«Պիտի իմանաս,
Մէկից շինել տաս՝
Նրկուը թողնես,
Շուտ երեք շինես.
Եւ դու հարուստ ես:
Զորսը պիտ' կորցնես.
Հնգից ու վեցից,
Սովորի վնակից,
Շինել եօթն ու ութ.
Կըլբանալ շուտ:
Եւ մէկ է իննը,
Տասը ոչ մինը:
Ահա ալսպէս ենք
Բաղմապատկում մենք»:

(էջ 108)

Բաւականանք ալս չափով և մեր եղբայրացութիւններն
անենք:

«Ֆ ա ու ս տ ի» Թարգմանութիւնը կարելի է համարել
Բարխուդարեանի աղուխ գործոցը. չնայելով մեր առաջ բե-
րած շեղումներին, գործն ընդհանրապէս ղեղարուկատօրէն է
գլուխ բերած և ով կարդալ միայն հաւերէն Թարգմանութիւնն
առանց բնագրի հետ համեմատելու, կարծում ենք, աւելի ու-
ժեղ տպաւորութիւն կստանալ, որովհետեւ ալս անգամ Թարգ-
մանիչը համարեալ թէ չէ մեղանչել հալոց լեզուի դէմ: Որչափ
նկատեցինք, բնագրի ալս մասերումն է շեղուել Թարգմանի-
չը, որտեղ համեմատաբար մոլթը և դժուար ոճեր են զործա-
ծուած. սակայն երբ մենք բնագրի հետ տեղ տեղ համեմատե-
ցինք նաև մի ուսերէն «Ֆատուստ», համոզուեցանք, որ հա-
մեմատաբար Բարխուդարեանի Թարգմանութիւնն աւելի մօտ
է բնագրին:

Բարխուդարեանի ամենախոշոր թերութիւնն ալս է, որ
նորա լեզուն զուրկ է որոշ ոճից և դարձուածքներից, որոնք
Թարգմանական երկի համն ու հոտն են կազմում:

Չնայելով ալթ թերութիւններին, ցանկալի է, որ Բար-
խուդարեանը ձեռնարկէ Թարգմանել նաև Ֆատուստի II մասը,
որովհետեւ իսկապէս ալթ գործի I և II մասը միասին մի ամբողջու-
թիւն են կազմում, թէև I մասը համարւում է մի ամբողջացած

միութիւն, որ թող կապերով է շղթաւած ի մասի հետ. սակայն եթէ ալդպէս դատենք, այն ժամանակ նորն իսկ առաջին մասի բաղկացուցիչ հատուածներն էլ մի մի ամբողջութիւն պէտք է ընդունենք, որովհետեւ դրանց մէջ եղած կապն երբեմն աւելի թու է, քան I և II մասերի: Առաջին մասն առանց երկրորդի՝ Ֆառուստի մի հատուածը կլինի միայն. առաջին մասում արծարծուած խնդիրը որոշումն է ստանում երկրորդ մասում: Գոգովորդական առասպելի տեսակէտից նորն պէտք է երկուսը մի ամբողջութիւն պէտք է կազմեն:

Ամբողջ Ֆառուստը մի նախագծով է ստեղծագործուած, որի հիմնական միտքն է՝ լանձին Ֆառուստի ներկայացնել մարդու ամենաազնիւ տիպարը, որ ոգևորուած է ամեն բան գիտենալու և կատարելագործուելու ձգտումով: Սկզբում Ֆառուստը ձգտում է ղէպի անսահմանը և հմայութեամբ է ուզում հասնել իւր նպատակին, սակայն համոզուելով, որ ալդ անկարելի է, ընկնում է կեանքի հոսանքի մէջ, որպէս զի անձամբ փորձէ այն բոլորը, ինչ որ լուզում է մարդկային սիրտը և ալդպիսով ըմբռնելու մարդու գոյութեան նպատակը: Ֆառուստի ալդ փորձը ողբերգական վերջ է ունենում՝ խորտակելով անարատ Մարդարիտի նորարողը՝ կեանքը. անսպասելի վերջանում է «Ֆառուստի» I մասը: Երկրորդ մասում Ֆառուստը համոզում է, որ կեանքի մէջ մարդկային կրքերի լազեցումը միմիայն բացասական հետեանքների է հասցնում և որ մարդկային գոյութեան նպատակն ըմբռնելու համար անհրաժեշտ է, որ մարդ ամենից առաջ ըմբռնէ ինքն իրեն, մտրդկային ուժերի ներածին չափ կատարելագործուի և ասպառուսմանսիրէ շրջապատող աշխարհն ու հանդամանքները: Այստեղ արդէն Ֆառուստի երևակայական իղէալները փոխւում են դրականի. նա սկսում է հասկանալ, որ մարդս պէտք է բաւականանալ ի արաբերական ուժի, քանի որ բացարձակն անհասանելի է: Ֆառուստի այս հոգեկան փոփոխութիւնից լիտու՝ Միֆիստոֆէլէսն ալ ևս չէ կարողանում նշան բնութիւն չաւորով առաջնորդել: Շարունակ կատարելագործման ձգտելով՝ Ֆառուստն անհրաժեշտ է համարում իւրացնել զեղեցիկ իղլալ և ալդ նպատակով անխոնջ ուսումնասիրում է դասական գրւածքները. դրանից լիտու՝ միւսն, իբրև զարգացման հաղուստ պաշարի տէր մարդ, նա գտնում է, որ բաւական չէ միմիայն ինքնաբաւականութեան զգաց-

մունքը, ալլ պէտք է գործել լօգոստ մարդկութեան և վերջ ի վերջոյ միմիայն դրանումն է գտնում մարդկային կեանքի նպատակը:

Ահա ալս տեսակէտից մենք ցանկալի համարեցինք, որ Բարխուդարեանը թարգմանէ նաև Ֆառուստի II մասը. գուցէ II մասի թարգմանութիւնն աւելի մեծ դժուարութիւնների հանդիպի, սակայն անուամենայնիւ մենք լուսով ենք, որ մեր ալեգարդ բանաստեղծն ալդ դժուարութիւններին էլ կլաղթէ և հալնորագոյն գրականութեան պատմութեան մէջ անմոռաց անուն կթողնէ՝ իբրև ամբողջ Ֆառուստի առաջին թարգմանիչ:

Թող ապագայ հալ սերունդն աւելի տաղանդաւոր թարգմանիչներ տալ:

«Ֆառուստը» տպագրուած է մեծ խնամքով, առանց վրիպակի և ընտիր թղթի վրայ: Հապկի գեղարուեստական նկարը պատրաստել է լատին նկարիչ Շամշինեանը, իսկ գրքի տպագրութեան ծախքերը հոգացել է պ. Ար. Բաբեանը, որ շնորհակալութեան արժանի է: Գրքի գինը նշանակուած է 2 մանէթ, որ ինքն ըստ ինքեան թանկ չէ, բայց մեր գիրք գնող դասակարգի համար շատ է: աւելի լարմար կլինէր կրկնակի թուով տըպագրել և գրքի գինը 1 մթ. նշանակել:

Թող գրական ճաշակ ունեցող հալ ընթերցողն իւր սեղանի զարդը համարէ Ֆառուստը:

ԲՐԻՉ

Le Droit Arménien depuis l'origine jusqu'à nos jours par K.—J. Basmadjian, Macon 1901.— Հայ. կական իրաւունք—սկզբից մինչեւ մեր օրերը Կ. Բասմաճեանի, տպուած Մակոնում 1901 թ.:

Փարիզում հրատարակուող «Բանասէր» ամսագրի պ. խմբագրից նորերս ստացանք վերոգրեալ վերնագիր կրող իւր կաղմած փոքրիկ գրքովը (brochure) կամ աւելի լաւ՝ փոքրիկ տետրակը, որ բաղկացած է ընդամենը 7—8 քառածալ երեսներից:

Այս «տետրակը» բովանդակում է իւր մէջ այն համառօտ քանախօսութիւնը (mémoire), որ «Փարիզի Ասիական ընկերութեան» անդամ պ. Բասմաճեանը 1901 ին ներկայացրել է